ԻՍՐԱՅԵԼՆ ՈՒՆԻ ԱՊԱԳԱ
ISRAEL HAS A FUTURE

(ՀՌՈՄ. 11:1,2–16-25)

ԲԱՆԱԼԻ ԽՈՍՔ.

(Հռոմ. 11:1,2–16-25)

1 Արդ ասում եմ, Մի՞թէ Աստուած դէն գցեց իր ժողովուրդը. Քաւ լիցի. որովհետեւ ես էլ
Իսրայէլացի եմ՝ Աբրահամի սերունդից, Բենիամինի ցեղից: 2 Աստուած դէն չ՚գցեց իր
ժողովուրդը որին առաջուց ճանաչեց.

16 Եւ եթէ **խմորը սուրբ է՝** ապա զանգուածն էլ. Եւ եթէ **արմատը սուրբ է՝** ապա ճիւղերն էլ: 17
Եթէ ճիւղերից մի քանիսը կտրուեցին, եւ դու, որ մի վայրի ձիթենի էիր, պատուաստուեցիր
նրանց վրա եւ հաղորդակից եղար **արմատին** եւ ձիթենու պարարտութեանը 18 Մի
պարծեցիր այդ ճիւղերի դէմ. Իսկ եթէ պարծենաս, իմացիր, որ դու չես արմատը վեր բռնում,
այլ արմատը՝ քեզ: 19 Իսկ արդ, կ՚ասես. «Ճիւղերը կոտորուեցին, որ ես պատուաստուեմ»: 20
Շա՛տ բարի: Իրենց անհավատութեան պատճառով կոտորուեցին, իսկ դու հավատով
հաստատ մնացիր: Մի՛ հպարտացիր, այլ վախեցիր, 21 Որովհետեւ եթէ Աստուած բնական
ճիւղերին չ՚խնայեց, մի գուցէ քեզ էլ չ՚խնայի: 22 Արդ, տե՛ս Աստծու բարութիւնը եւ խստութիւնը.
խստութիւն՝ կործանուածների հանդէպ եւ Աստծու բարութիւն՝ քո հանդէպ, եթէ մնաս նույն
բարութեան մէջ. ապա թէ ոչ դու էլ կը կտրուես: 23 Իսկ նրանք, որ նույն անհաւատութեան մէջ
չեն մնա, կը պատուաստուեն. Որովհետեւ Աստուած կարող է դարձեալ պատուաստել
նորանց: 24 քանի որ, եթէ դու ի բնէ **վայրի ձիթենուց** կտրուեցիր եւ բնության հակառակ
բարի ձիթենու վրա պատուաստուեցիր, որչա՜փ եւս առաւել նրանք, որ բուն իսկ ճիւղերն են,
կը պատուաստուեն իրենց **ձիթենու վրա:** 25 Որովհետեւ չեմ կամենում, եղբայրներ, որ
անգէտ լինէք այս խորհրդին, որպէսզի դուք ձեզ իմաստունի տեղ չդնէք, թէ կուրութիւն եկաւ
Իսրայէլի **մէկ մասի** վրա եւ կը տեւի, մինչեւ որ հեթանոսների ամբողջութիւնը փրկուի: 25 եւ
ապա ամբողջ Իսրայէլը կը փրկուի.

Սաղմոս 137:5,6

5 Եթէ քեզ մոռանամ, Երուսաղէմ, իմ աջ ձեռքը մոռացուած լինի: 6 Իմ լեզուն թող քիմքիս
կպչի, եթէ քեզ չհիշեմ. եթէ Երուսաղէմն իմ ուրախութիւնից վեր չի դասեմ:

Սաղմոս 37:25

25 Ես երեխայ էի եւ ծերացա՝ եւ **(արդյոք տեսա)** չտեսա արդարին երեսից թողուած, եւ ոչ
նորա զավակին, որ հաց մուրանա: